նոյ մինչև ի Բարգուշատ» և ապա հայտնում, թե «առի զամրոցանիս Եղեգեաց ձորոյս աւգնութիւն այ (աստուծոյ)»։ Ո՞ր ամրոցներն են դրանք, վորոշել չենք կարող. Եղեգյաց ձորում հայտնի բերդը ժողովրդի կողմից այժմ Սմբատաբերդ կոչվածն է, Եղեգիս ավանից քիչ դեպի արևմուտք, Ոստինք գյուղի գլխին, Ցախացքարի վանքի լեռնաշղթայի ծայրին. բայց «ամրոցանիս» յոգնակի գործածությունը ցույց է տալիս, թե յեղել են և ուրիշ յերկրորդական ամրություններ, վորոնց մասին հիշատակություն չունի պատմությունը։ Սակայն մենք Որբելյանից գիտենք, վոր Վասակ Խաղբակյանը նվաճել է նաև Վայոց ձորի ամենից կարևոր ամրությունը՝ Հրասեկա բերդը՝ Արփայեցի Ախթամարի ոգնությամբ՝ «հրամանաւ և ուժով Իվանէի» *։

Յերկու ուրիշ արձանագրություն Վասակը թողել է Կեչառվաց վանքում՝ յուր շինած Կաթուղիկեի հարավային պատին (պատկ. 4. Հավել. 4) և արեմտյան դրան ճակատին, (պատկ. 22. Հավել. Ա. 10). դոցանից առաջինը, թեև պակասավոր՝ քարերը թափած լինելու պատճառով, բայց տալիս է շինության թվականի հետ (ՈԿԳ=1214) կարևոր տեղեկություններ Վասակի զինակից յեղբայրների, վորդիների և կնոջ մասին. յերկրորդը պարզում է Խաղբակյանների և Զաքարյանների հարաբերությունը, յերկրորդելով կնոջ և վորդիների հիշատակությունը։ Այստեղ ևս արձանագրությունը Վասակի բերանից է գրված ՈԿԳ(=1214) թվին, և թվագրված է Գեորգի Լաշայի, Զաքարիա սպասալարի և նորա յեղբայր Իվանեի թագավորություններով *. հիշատակված պիտի լիներ և Իվանեի վորդին Ավագը, վորովհետև հիշված է Խոշաքի անունը, վորպես Ավագի մոր, ինչպես մակաբերել կարելի յե արձանագրության մնացորդից։ Յերկրորդ արձանագրության մեջ Զաքարիայի անունը չկա, բնականաբար, վորովհետև Վասակ հայտնում է, թե «շինեցի զսբ կաթուղիկէս յաւգնականութիւն եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբեկի եւ արեան հարազատի իւրոյ Շահանշահի եւ Աւագին եւ իւր մաւրն պատրոն Խոշաքին», ուրեմն և կենդանի պատրոնների անունը միայն պիտի հիշատակվեր, իսկ Զաքարիան վախճանված եր արդեն։

Խաչարձաններ Բեղվա ձորում. **Պատկեր 21.**

* Օրբ. 350։

* Ուշադրության արժանի է, վոր Զաքարիայի և Իվանէի իշխանությունը «թագաւորութիւն» է կոչված. թեպետ արձանագրությունը թերի յե այս մասում, բայց անկասկած է իրողությունը յերկրորդ տողի մնացորդներով (տես. Արձ. Հավել. 4)։